

**ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Նարինե ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԵՀ ՏԿ ամբիոնի վարիչ, տ. գ. թ. դոցենտ

Մհեր ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ

ԵՀ ՏԿ ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. գործառույթների գնահատման հայեցակարգ, հարկային
ծառայողներ, հարկային մարմին, հարկային մարմնի գործառույթներ

Ներածություն: Հետպատերազմյան ժամանակաշրջանում ՀՀ տնտեսության վերականգման և համաշխարհային տնտեսական ֆորումում մրցունակ տնտեսություն ունենալու համատեքստում էլ ավելի հրատապ ու արդիական են դարձել արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու և ՀՀ հարկային համակարգում առկա խնդիրները առաջնահերթ լուծելու հիմնահարցերը: Արդյունավետ հարկային համակարգի ձևավորման նպատակով անհրաժեշտ է համակողմանիորեն վերլուծել և բացահայտել այդ համակարգում առկա կառավարման խնդիրները, որոնք արդյունք են հարկային մարմնի գործառույթների անարդյունավետ գնահատման: Նմանատիպ խնդիրների բացահայտումը նպատակ ունի ձևավորել հարկային մարմնի գործառույթների գնահատման ինքնուրույն գործող օբյեկտիվ մեխանիզմ, որը պարբերաբար կզտի հարկային ծառայողների կողմից իրականացվող գործառույթները՝ ամբողջացնելով այն գործառույթները, որոնք կնպաստեն հարկային մարմնի առաքելության իրականացմանը: Որպես այդպիսի մեխանիզմ հանդես է գալիս հարկային մարմնի գործառույթների գնահատման հայեցակարգը, որն իր մեջ ամբողջացնում է հարկային մարմնի գործունեության գնահատմանն ուղղված եղանակներն ու մեխանիզմները: Այս տեսանկյունից կարևոր դեր ու նըշանակություն ունի հարկային մարմնի գործառույթների գնահատման հայեցակարգի հիմնական ուղղությունների ճիշտ սահմանումը:

Մեթոդաբանություն: Գիտական հոդվածի համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք ենք հանդիսացել ՀՀ հարկային համակարգում տեղի ունեցող բարեփոխումները, հարկային հարաբերությունները կարգավորող օրենքները, հարկային համակարգի կառավարման և բարեփոխումների բնագավառում կատարված ուսումնասիրությունները, օրենսդրա-

կան ակտերն ու ՀՀ կառավարության որոշումները, ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքում հրապարակված հաշվետվությունները: Հոդվածում վերլուծություններ կատարելու նպատակով կիրառվել են համեմատությունների, համադրությունների, վերլուծությունների և վիճակագրական մեթոդները:

Գրականության ակնարկ: ՀՀ-ում հարկային բարեփոխումների ու հարկային արդյունավետ համակարգի ձևավորման ուղղությամբ տեսական, գործընթակն և մեթոդաբանական բազմաթիվ հիմնահարցեր լուսաբանվել են՝ Յ. Սուվարյանի, Վ. Բոստանջյանի, Տ. Հարությունյանի, Ա. Մարկոսյանի, Ա. Ալավերդյանի և այլոց, ինչպես նաև օտարերկրյա հեղինակների աշխատություններում: Հարկային համակարգի խնդիրների հետազոտության տեսանկյունից՝ նշված հեղինակների կողմից հիմնականում ուսումնասիրվել են հարկային մարմնի ռազմավարության մշակման, հարկային վարչարարության կատարելագործման [Հարությունյան, 2016, 333], ՀՀ հարկային համակարգում բարեփոխումների իրականացման, հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման և նմանատիպ այլ հիմնահարցեր [Բոստանջյան, Հարությունյան, 2016, 470]: Հաշվի առնելով կատարված հետազոտությունների արդյունքները՝ անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել, թե հարկային վարչարարության կատարելագործման և այլ նպատակներով ՀՀ հարկային համակարգում իրականացված բարեփոխումների արդյունքում՝ հարկային մարմնի գործառույթների իրականացումը որքանով է նպաստել ստվերային տնտեսության կրճատմանը: Վերլուծելով ՀՀ հարկային մարմնի գործունեությունը, ըստ ՀՀ ՊԵԿ տարեկան հաշվետվությունների՝ բացահայտըվել է, որ հարկային մարմնի կողմից իրականացվող գործառույթները ոչ միայն չեն նպաստել ստվերային տնտեսության կրճատմանը, այլ նաև գործառույթների անարդյունավետ իրականացումը պատճառ է հանդիսացել ստվերային տնտեսության բարձր ցուցանիշի, որի մասին հրապարակումներ են կատարվել տարբեր միջազգային կառույցների կողմից [Ֆրանգույան, 2019, 162-171]: Այս առումով, ստվերային տնտեսության բարձր ցուցանիշի պատճառներից է հանդիսացել հարկային մարմնի գործառույթների ոչ համարժեք գնահատումը և հարկային գործառույթների արդյունավետ գնահատման համակարգի բացակայությունը: Ընդհանուր առմամբ, քանի որ հարկային մարմնի գործառույթների գնահատմանն առնչվող հարցերը քիչ ուսումնասիրված են, ուստի անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել ՀՀ հարկային համա-

կարգում հարկային գործառույթների գնահատման մեխանիզմները: Հոդվածում առաջարկվում է ՀՀ-ում արդյունավետ հարկային համակարգի ձևավորման նպատակով կարևորել հարկային մարմնի գործառույթների գնահատման հայեցակարգի ձևավորման անհրաժեշտությունը և այդ հայեցակարգի հիմնական ուղղությունների ճիշտ սահմանումը:

Վերլուծություն: Հարկային համակարգի գործառույթների գնահատման հայեցակարգը համակարգ է [Фраггьян, 2021, 98-101], որն ուղղված է հարկային համակարգի առաքելության սահմանմանը, հարկային մարմնի ներդրած մեխանիզմների արդյունավետության գնահատմանը, համակարգի խնդիրների առանձնացմանը և դրանց լուծման նպատակով հարկային ծառայողների գործառույթների գնահատման, կատարելագործմանն ու նոր գործառույթների մշակմանը: Հայեցակարգային ուղղությունները հարկային համակարգի խնդիրների լուծման այն տարբերակներն են, որոնց օգնությամբ պլանավորվում է բարելավել հարկային մարմնի կառավարումը:

Հայեցակարգի հիմնական ուղղություններից է ստվերային տնտեսության գնահատման գործառույթների ձևավորումը, որոնք ուղղված կլինեն ստվերային տնտեսության օբյեկտիվ գնահատմանը: Կարևորելով հարկային ծառայողների դերը ստվերային տնտեսության գնահատման գործում՝ անրաժեշտ է սահմանել այն մեխանիզմներն ու գործառույթները, որոնց օգնությամբ կարելի է գնահատել ստվերային տնտեսության իրական ծավալը: Այս առումով կարևորվում են տեղեկատվության հավաքագրման և մշակման գործառույթները, ինչը պահանջում է յուրաքանչյուր հարկ վճարողի մասով պարբերաբար հավաքագրել տեղեկատվություն և այն ենթարկել մշակման: Ընդ որում, թե՛ տեղեկատվության հավաքագրման և թե՛ այդ տեղեկատվության մշակման գործընթացում հարկային ծառայողը չպետք է որոշում կայացնի: Այլ խոսքով, հարկ վճարողի ռիսկայնության և ստվերի մակարդակի գնահատման գործառույթը պետք է տարանջատվի այդ նպատակով տեղեկատվության հավաքագրման և մշակման գործառույթներից: Դա հատկապես կարելի է ստվերի օբյեկտիվ գնահատման առումով, քանի որ, երբ տեղեկատվություն հավաքագրողը գնահատում է նաև հարկ վճարողի ռիսկայնությունը, մեծ է հավանականությունը, որ հարկային ծառայողի որոշումը կարող է ունենալ սուբյեկտիվ դրդապատճառներ: Ուստի պետք է ստեղծել այնպիսի մեխանիզմ, երբ տեղեկատվություն հավաքագրողը չունենա որոշում կայաց-

ներու և ստվերը գնահատելու լիազորություն: Հաջորդ ուղղությունը ստվերային տնտեսության կրճատման գործառույթների համակարգի ձևավորումն է: Ստվերի գնահատումից հետո տրամաբանական շարունակությունը դրա կրճատմանն ուղղված գործառույթների իրականացումն է: Ներկայումս ստվերային տնտեսության կրճատման գործառույթները ուղղված են հարկային սուուգումներին և ուսումնասիրություններին, դրանց արդյունքում հարկ վճարողների ճշգրտված հաշվետվություններին, իսկ հարկ վճարողների չարձագանքելու դեպքում նախնական հաշվարկների կազմմանը: Նման գործառույթները կատարված ուսումնասիրությունների արդյունքում գնահատվել են անարդյունավետ և չեն նպաստել ստվերի կրճատմանը հետևյալ պատճառներով.

✓ Իրականացվող հարկային սուուգումների և ուսումնասիրությունների գերակշիռ մասը հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության սուուգումներ են, որոնցով արձանագրված տուգանքների ընդհանուր գումարը տարեկան չի գերազանցում 1-2 մլրդ դրամը կամ պետական բյուջեի եկամուտների 1%-ը: Միաժամանակ ամսական գրեթե նույն քանակի սուուգումների փաստը վկայում է դրանց պլանային և գործառույթի իրականացման ձևական բնույթը: Ավելին, ՀՀ ՊԵԿ հաշվետվությունում բացակայում է տեղեկատվություն, թե որքանով են սուուգումները նպաստել ստվերի կրճատմանը:

✓ Հարկային սուուգումների և ուսումնասիրությունների արդյունքներով հարկ վճարողների կողմից ճշգրտված հաշվետվությունների ներկայացումը և այդ ճշգրտումներին ուղղված գործառույթների իրականացումը նույնպես ստվերային տնտեսության կրճատման նպատակ չունի: Նախ, ճշգրտված հաշվետվություններն ուղղված են հարկ վճարողի գործունեությանն անցյալում, քանի որ հարկ վճարողը փոփոխություններ է կատարում նախորդ ժամանակաշրջաններում իր հայտարարագրած գործունեության ցուցանիշների մեջ և դրանով դեռևս հիմնավորված չէ, որ ապագայում նրա գործունեությունը և հարկային վարքը կփոխվեն: Ավելին, նախկինում կատարված սխալների ճշգրտումը ստիպում է լինել ավելի զգուշավոր և մնալ ստվերում:

✓ Հարկ վճարողների հարկային սուուգումներին և ուսումնասիրություններին չարձագանքելիս հարկային ծառայողներն իրականացնում են նախնական հաշվարկներ կազմելու գործառույթ, ինչը ևս անարդյունավետ է և չի նրպաստում ստվերային տնտեսության կրճատմանը, քանի որ կազմվող հաշվարկները խիստ նախնական են և հանգամանքների քննության դեպքում ենթակա են փոփոխության:

Հայեցակարգի հաջորդ ուղղությունը հարկային մարմնի կառավարման կազմակերպարավական նոր կառուցվածքի ձևավորումն է: Կառավարման նոր կառուցվածքի ձևավորման նպատակով՝ անհրաժեշտ է առանձնացնել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են նախկին և գործող կառուցվածքներին: Ընդհանուր առմամբ բոլոր ժամանակներում հարկային մարմնի կառուցվածն ունեցել է մի շարք առանձնահատկություններ.

✓ Հարկային մարմնի կառավարման կառուցվածքում առանձնահատուկ դեր ու նշանակություն ունեն շտաբային մարմինները ի դեմս տեղակալների ինստիտուտի: Այլ խոսքով, գրեթե բոլոր կառավարման հարթություններում ղեկավարին կից առկա են շտաբային մարմիններ՝ տեղակալներ, որոնց տրված են ֆունկցիոնալ լիազորություններ: Մասնավորապես, ՀՀ ՊԵԿ նախագահն ունի 5 տեղակալ, մեկական տեղակալներ ունեն հարկ վճարողների ընթացիկ հսկողության վարչությանը ենթակա տարածքային բաժինների պետերը և այլն:

✓ Հարկային մարմնի կառավարման կառուցվածքը դիվիզիոնալ կառուցվածք է, որտեղ ստորաբաժանումներից մի մասը ունի տարածքային կազմակերպական կառուցվածք [Սուվարյան, 2002, 560]: Օրինակ, հարկ վճարողների ընթացիկ հսկողության վարչությունը ունի տարածքային կառուցվածք և 20 բաժին, որոնցից 11-ը մարզերում, 7-ը Երևան քաղաքի համայնքներում, իսկ 2-ը հատուկ բաժիններ են: Նման կերպ տարածքային բաժնում ունեն նաև հարկ վճարողների սպասարկման վարչությունը, հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչությունը և այլն:

✓ Հարկային մարմնի կառավարման կառուցվածքը չունի ձևավորման հիմք: Հարկային մարմնի կառավարման կառուցվածքի ձևավորման նպատակով չի իրականացվել հարկային գործառույթների գնահատում, ինչի արդյունքում կառավարման կառուցվածքում առկա են ստորաբաժանումներ, որոնց գործառույթները միտված չեն հարկային մարմնի առաքելության իրագործմանը: Մասնավորապես, հարկային մարմնի կառուցվածքում առկա են այնպիսի վարչություններ ինչպիսիք են քննչական վարչությունը, ներքին աուդիտի վարչությունը, ներքին անվտանգության վարչությունը և այլն, որոնց գործառույթների իրականացումը անիմաստ է ՀՀ ոստիկանության, ՀՀ ազգային անվտանգության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության և այլ մարմինների առկայության համատեքստում:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշյալ առանձնահատկություններով հարկային մարմնի կառավարման կառուցվածքը անարդյունավետ է: Անհրաժեշտ է ձևավորել ադապտիվ կամ ճկուն կառուցվածք, որտեղ կբացառվեն ֆունկցիոնալ շտաբային լիազորություններ իրականացնող մարմինները, տարածքային կառուցվածքների փոխարեն կկիրառվեն մատրիցային կառուցվածքներ, իսկ ստորաբաժանումները կստեղծվեն՝ հաշվի առնելով հարկային գործառույթների գնահատման արդյունքները՝ կարևորելով այն գործառույթները, որոնք նպաստում են հարկային մարմնի առաքելության իրագործմանը:

Հարկային ծառայողների գործառույթների գնահատման հայեցակարգի հաջորդ ուղղությունը հարկային համակարգում առկա կառավարչական վարքագծի մոդելի մշակումն է [Мкртычян, 2014, 201]: Հարկային ծառայողների գործառույթների արդյունավետ իրականացման տեսանկյունից կարևոր է հասկանալ, թե ինչ դեր է ունենալու հարկային ծառայողը: Այլ խոսքով, անհրաժեշտ է ձևավորել կառավարչական վարքագծի մոդել, որով հարկային համակարգը կազդի հարկային ծառայողների վրա՝ նպաստելով գործառույթների արդյունավետության բարձրացմանը: Նոր մոդելի հիմքում առաջարկվում է հարկային ծառայողներին բաժանել հետևյալ 3 խմբերի.

1. Հարկային ծառայողների մոտ, ովքեր գերադասում են աշխատանքը կամ նախագիծը ստանալ մանրամասն՝ ստանալով հրահանգներ և ուղղություններ կոնկրետ խնդիրները և նախագիծները իրականացնելու վերաբերյալ, գերակշռում են տեխնիկական-մարդ և տնտեսական-մարդ կարծրատիպերը, ուստի նրանց վարքագծային մոդելը պետք է ունենա տեխնիկական ուղղվածություն:

2. Հարկային ծառայողները, ովքեր գերադասում են գործել ինքնուրույն, նախագիծները և խնդիրները ստանալ ընդհանուր գծերով, հանդես բերել նախաձեռնողականություն, դժվարությամբ են ընդունում վերադասի և ղեկավարների ցուցումները, հսկողությունը և այլն: Նրանց մոտ գերակշռում է բարոյական-մարդ և հոգեբանական-մարդ ստերիոտիպերը, ուստի նրանց վարքագծային մոդելը պետք է ունենա բարոյական ուղղվածություն՝ խթանելով նախաձեռնողականությունը:

3. Հարկային ծառայողները, ովքեր բնավորությամբ անհանգիստ են և նախընտրում են ստանալ խնդիրներ ու նախագիծներ, որոնց իրականացումը

մեծ ջանքեր չի պահանջում, գերադասում են նախագծեր, որոնք պարբերաբար կրկնվում են և ունեն իրականացման պարզ մեխանիզմներ: Նման հարկային ծառայողների մոտ աշխատողի վարքի որևէ կարծրատիպ չի գերակշռում, իսկ նրանց վարքագծային մոդելը հստակ ուղղվածություն չունի: Աշխատանքի իրականացման ընթացքում նրանք որոշ չափով հանդես են բերում նախաձեռնություն՝ կողմնորոշվելով դեպի բարոյական-մարդ և հոգեբանական-մարդ կարծրատիպերը, իսկ որոշ դեպքերում պահանջում են հստակ ցուցումներ և հրահանգներ՝ կողմնորոշվելով դեպի տեխնիկական-մարդ և տնտեսական-մարդ կարծրատիպերը:

Վերոնշյալ երեք խումբ հարկային ծառայողներից յուրաքանչյուրին բնորոշ է կառավարչական վարքագծի իր մոդելը, որն անհրաժեշտ է հաշվի առնել հարկային ծառայողներին գործառույթներ վերապահելիս:

Եզրակացություններ: Արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու տեսանկյունից կարևորվում է հարկային գործառույթների գնահատման հայեցակարգի ձևավորումը, որի հիմնական ուղղություններ առաջարկվում է սահմանել՝ ստվերային տնտեսության գնահատման գործառույթների ձևավորումը, ստվերային տնտեսության կրճատման գործառույթների ձևավորումը, հարկային մարմնի կառավարման կազմակերպարավական նոր կառուցվածքի ձևավորումը, հարկային համակարգում առկա կառավարչական վարքագծի մոդելի մշակում:

Հայեցակարգում առանձին ուղղություն է ստվերային տնտեսության գրնահատման ու կրճատման գործառույթների ձևավորումը: Առաջարկվում է ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված գործառույթների համախումբը բաժանել երեք հիմնական խմբի՝

- ստվերում հայտնվելու պատճառների բացահայտմանը ուղղված գործառույթներ,
- ստվերային տնտեսության մեջ հայտնված հարկ վճարողների նկատմամբ միջոցառումների իրականացման գործառույթներ,
- ստվերային տնտեսության կրճատմանը ուղղված միջոցառումների արդյունքների գնահատման գործառույթներ:

Հայեցակարգի առանձին ուղղություն է հարկային մարմնի կառավարման նոր կառուցվածքի ձևավորումը և կառավարչական վարքագծի նոր մո-

դելի մշակումը, որոնց օգնությամբ հարկային համակարգում հնարավոր կլինի հարկային ծառայողներին պատվիրակել այնպիսի գործառույթներ, որոնք առավելագույնս համապատասխանում են նրանց վարքագծային մոդելին: Արդյունքում նախատեսվում է ձևավորել կառավարման այնպիսի կառուցվածք, որը կբաժրացնի հարկային համակարգի կառավարման արդյունավետությունը՝ լուծելով հարկային համակարգում առկա կառավարման խնդիրները:

Գրականության ցանկ

1. Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում / Տ. Վ. Հարությունյան. Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016.– 333 էջ:
2. Բոստանջյան Վ., Հարությունյան Տ. Հարկային հարաբերությունների համակարգը և հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ. Գիտական հոդվածների ժողովածու, հատոր 1, 2016, 470 էջ:
3. Մ. Ֆրանգուլյան, Ստվերային տնտեսությունը որպես հարկային մարմնի գործառույթների անարդյունավետ գնահատման արդյունք, ԵՀ գիտական հոդվածների ժողովածու, 2019, N 10(1), էջ 162-171:
4. М. Франгулян, Необходимость в концепции оценки функции налоговой системы как предпосылка формирования эффективной налоговой системы в Республике Армения, под ред. д-ра экон. наук, проф. Е.А. Горбашко, д-ра экон. наук, проф. И.В. Федосеева. – СПб. : Изд-во СПбГЭУ, 2021, стр. 98-101.
5. ՀՀ ՊԵԿ ավարտված տարեկան ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ, ՊԵԿ պաշտոնական կայք էջ՝ <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIY2018>
6. «Մենեջմենթ», Եր.: Տնտեսագետ, 2002 560 էջ:
7. Мкртычян Г.А. Организационное поведение: учебное пособие / Г.А. Мкртычян, О.В. Петрова. Нижний Новгород: Изд-во ННГУ, 2014. 201 с.

Նարինե ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Մհեր ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ
Հարկային մարմնի գործառույթների գնահատման հայեցակարգի հիմնական ուղղությունները ՀՀ-ում

Բանալի բառեր. գործառույթների գնագարման հայեցակարգ, հարկային ծառայողներ, հարկային մարմին, հարկային մարմնի գործառույթներ

Հոդվածում ուսումնասիրվել են հարկային մարմնի գործառույթների գնահատման հայեցակարգի հիմնական ուղղությունները, որոնք կարևորվել են արդյունավետ ՀՀ-ում հարկային համակարգ ձևավորվելու գործում: Հարկային մարմնի գործառույթների գնահատման հիմնական ուղղությունները այն հիմնական ուղենիշներն են, որոնք ուղղված են ՀՀ հարկային համակարգում առկա կառավարման խնդիրների լուծմանը: Լուծելով հարկային համակարգում առկա կառավարման խնդիրները անպայմանաորեն կբարձրանա հարկային համակարգի կառավարման արդյունավետությունը, որն իր ազդեցությունը կունենա հարկային քաղաքականության վրա:

Нарине КИРАКОСЯН, Мгер ФРАНГУЛЯН
Основные направления концепции оценки функции налоговых служб в Республике Армения

Ключевые слова. концепция оценки функций налоговых служб, налоговой службы, функций налоговой службы, теневая экономика

В статье исследуются основные направления концепции оценки функций налоговой службы, которые могут быть использованы при эффективном формировании налоговой системы в Республике Армения. Основные направления оценки функций налоговых служб направлены на решение существующих управленческих проблем в налоговой системе Республики Армения. Решение управленческих проблем в налоговой службе, безусловно, повысит эффективность управления налоговой системой, что повлияет на налоговую политику. С этой точки зрения концепция оценки функций налоговых служб является основным документом, основные направления которого нацелены на решение управления налоговой системой.

Narine KIRAKOSYAN, Mher FRANGULYAN
The main directions of the concept of the assessment of tax services' functions in Republic of Armenia

Key words. concept of evaluation of the tax services' functions, tax officials, tax service, functions

The article examines the main directions of the concept of assessing the functions of the tax service, which can be used in the effective formation of the tax system in the Republic of Armenia. The main directions of evaluation of tax services' functions are the main guidelines that are aimed at solving the existing management problems in the tax system of the Republic of Armenia. Solving the management troubles in the tax service will definitely increase the efficiency of the tax system management. From this point of view, the concept of evaluation of the tax services' functions is the main document, the main directions of which are aimed at solving the management problems.